ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի <Վարսավիրական արվեստ և դիմային զարդահարդարում՝ վարսահարդար> հիմնական կրթության հիմքով ավարտական կուրսի մասնագիտության 2022 թվականի պետական որակավորող հանձնաժողովի

2022 թվականի հունիսի 14-ին անցկացվեց <Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի <Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար> մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգում:

Պետական ամփոփիչ ստուգումը կազմակերպվեց և անցկացվեց հանձնաժողովի հետևյալ կազմով՝

նախագահ՝	Հարություն Ղազարյան	-	<ԱՏԱՆ> ՍՊԸ-ի տնօրեն
տեղակալ՝	Քնարիկ Ահարոնյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարանի տնօրեն
քարտուղար՝	Լիանա Հովհաննիսյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս
անդամներ՝	Կարինե Գրիգորյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի փոխտնօրեն
	Աննա Ղանդիլյան	-	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս

Հաստատությունում պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից պետական քննության ձևով: Քննությանը մասնակցեց 18 ուսանող:

Ուսումնական հաստատությունում <Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար> մասնագիտությամբ դասավանդող մասնագետներն ունեն դասավանդման փորձ, կարողություններ և հմտություններ, մասնակցել են մոդուլային ուսուցման վերապատրաստման դասընթացների, ծանոթ են վարսավիրական արվեստի բնագավառի զարգացմանը, ոլորտի նորարարություններին, գործատուների և աշխատաշուկայի պահանջներին:

Պետական քննության հարցատոմսերում ներառված էին առանձին մասնագիտական մոդուլների հիմնական բովանդակությանը համապատասխանող հարցեր, որոնք բխում են մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված որակավորման բնութագրից:

Պետական ամփոփիչ ստուգման ընթացքում ուսանողները ցուցաբերեցին մասնագիտական լավ գիտելիքներ, կարողություններ և որոշակի հմտություններ: Կատարեցին գործնական աշխատանքներ՝ կանացի և տղամարդու կտրվածքներ, պարզ և բարդ հանդիսավոր սանրվածքներ, սարվածքների մոդելավորում, առօրյա և հանդիսավոր հյուսվածքներ, մազերի

ներկում և երանգավորում: Բավականին լավ կարողանում էին համադրել մարդաչափական տվյալները սանրվածքի տեսակի հետ:

Ուսանողները տիրապետում էին մազերի խնամքի միջոցներին, քիմիական ուղղման և գանգրացման համար նախատեսված նյութերին և պարագաներին, ճշգրտորեն պահպանում էին սանիտարահիգենիկ նորմերն ու անվտանգության կանոնները: Նրանց աշխատանքներում ընդգծված էր ստեղծագործական մոտեցումներ: Առանձնահատուկ կարողություններ դրսևորեցին Արմենուհի Տերտերյանը, Վիկտորյա Մելքոնյանը, Նաիրա Հակոբյանը և Անգելինա Գևորգյանը:

Պրակտիկաների ընթացքում աշխատանքի հրավեր են ստացել չորս ուսանող:
Պետական որակավորող հանձնաժողովը որոշեց մասնակից 18 ուսանողներին շնորհել <Վարսահարդար> որակավորում և հանձնել պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:
Մասնագետների պատրաստման հետագա կատարելագործման նպատակով ուսումնական հաստատությանը առաջարկվեց, պարբերաբար փորձի փոխանակման նպատակով կազմակերպել հանդիպում քաղաքի հմուտ վարսահարդարների հետ, հետևել մասնագիտության հետ կապված նորարարություններին, դրանք կիրառել ուսումնական գործընթացում, առավել սերտացնել համագործակցային կապը գործատուների հետ: Առաջարկվեց նաև ուսանողների հմտությունների բարելավման նպատակով համագործակցել սոցիալական կենտրոնների հետ:

Հանձնաժողովի նախագահ՝ Հարություն Ղազարյան

14.06.2022թ.